# ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2011-2015 ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2011-2014 ԹԹ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ Մ.ՃԱՂԱՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

ԵՊՀ ԻՄ-ի 2011-2015 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի համաձայն նախատեսված էր իրագործել ՌԾ-ով սահմանված առանձին նպատակների մի շարք խնդիրներ: Դրանք մասնավորապես նպատակաուղղված են ԵՊՀ ԻՄ-ում բարձրորակ կրթության ապահովմանը, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը, կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառության ապահովմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ կադրային ներուժի կատարելագործմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցված մուտքի ընդլայնմանը և այլն:

Ներկայացնենք խնդիրների իրականացման ընթացքը.

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ I. Պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր:**

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղն ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում և բարձրորակ կրթության ապահովումը:

**(Բարձրորակ կրթություն) Խնդիր I. ա) «Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի ծրագրային չափանիշներին և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին համահունչ»:**

ՌԾ-ի 1-ին նպատակի կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխման խնդրի շրջանակներում ըստ ժամանակացույցի իրականացվել են հետևյալ գործընթացները.

1. 2012 թվականի 2-րդ կիսամյակի ավարտին աշխատաշուկայի պահանջներին համապատասխան իրականացվել է մասնագիտությունների ճշգրտում և համապատասխան կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերանայում: Առաջնորդվելով ԵՊՀ մեթոդական ուղենիշներով՝ կազմվել են նոր մասնագիտությունների համար համապատասխան կրթական ծրագրեր՝ հիմք ընդունելով որակավորումների ազգային շրջանակը: / 2014թ. Սեպտեմբեր ամսին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությունը փոխվել է «Հոգեբանություն» մասնագիտության/:
2. Մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածությունը ուսումնասիրելու համար իրականցվել են մի շարք հարցումներ՝

- «ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում» (2010թ. սեպտեմբերի 2),
- «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ

շրջանավարտների հարցում», (2010թ. սեպտեմբերի 2), նշենք, որ 2014թ.-ի հարցման իրականացման համար մշակվել է նաև ***հետազոտման գործիքի անձնագիրը***, որը ներկայացնում է հետազոտման ընդհանուր նպատակը, խնդիրները, տալիս է կապը մասնաճյուղի ռազմավարական նպատակի հետ, հիմնավորում է ընտրված մեթոդը, ընտրանքը, կիրառման պարբերականությունը և այլն: /շրջիկ թերթիկ/

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ***պրակտիկանտ-ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ հարցում*** /անցկացման կարգ չկա, պետք է մշակել/ Այս հարցումն անց է կացվում 2011 թ-ից, ունի պարբերական բնույթ, նպատակ ունի պարզելու արտաքին շահակիցների գնահատականը ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների ձեռք բերած տեսական, պրակտիկ գիտելիքների, գրագիտության, էթիկայի պահպանման և վարվեցողության, ստեղծագործական ունակությունների և ժամանակակից մեթոդների կիրառման հմտությունների վերաբերյալ: 2014թ. փետրվարի 10-ին մասնաճյուղում տեղի էունեցել հանդիպում մարզի գործատուների հետ, որտեղ քննարկվել են մասնաճյուղի շրջանավարտների տեսական ու գործնական պատրաստվածության մակարդակի վերաբերյալ խնդիրները, նշվել մեր շրջանավարտների որոշ թերությունները /դասավանդման ժամանակակից մեթոդների բացակայությունը, պրակտիկ կարողությունների ցածր մակարդակը/ ու առավելությունները /տեսական գիտելիքների բարձր մակարդակը/: Ընդունվել են մի շարք գործնական որոշումներ:

2010-11 ուստարվանից մասնաճյուղում ներդրված են ելքային կրթական արդյունքներով համալրված առարկայական ծրագրերը, իսկ 2014թ. սեպտեմբերից կիրառվում են դասընթացների փաթեթները (պորտֆոլիո), դրանք որպես կրթական գործընթացում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիա և որը ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում դասախոսի գործունեության և ձեռքբերումների հավաքածու: Այն պարունակում է դասընթացի վարման ռազմավարությունը /ստրատեգիան/ և մարտավարությունը /տակտիկան/, պլանավորվում է դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացվում է դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը, և կողմնորոշված է ոչ միայն ուսանողի գնահատմանը, այլ նաև նրա անհատական մասնագիտական աճի ապահովմանը:

Պորտֆոլիոյի փաստաթղթերն ըստ իրենց բովանդակության և ժամանակագրության բաշխվում են երեք բաժիններում.

- Բաժին 1. Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացը սկսվելուց առաջ, /այս փուլը 2014թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ արդեն իրականացված է, բոլոր դասախոսներն ունեն 1-ին կիսամյակի գոնե մեկ դասընթացի փաթեթը/,
- Բաժին 2. Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի իրականացման ընթացքում /գտնվում է ընթացքի մեջ/
- Բաժին 3. Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի ավարտից հետո /նախատեսվում է իրականացնել/:

3. Նախատեսվում է իրականացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքների պլանավորում և գնահատում:
4. Առաջնորդվելով կրթական ծրագրերի մշակման ԵՊՀ մեթոդական ուղենիշներով մասնաճյուղի բոլոր կրթական ծրագրերի ընդհանուր կրթության կառուցամասերը ուղղորդված է ուսանողների խորհրդակցական, քննադատական, միջանձնային և այլ որակների ապահովմանը:

***Խնդիր 1 բ/*** **Ներդնել որակի ներքին ապահովման համակարգ՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան:**

Մասնաճյուղում բավականին լավ ընթանում է որակի ներքին ապահովման և նրա ձևավորման գործընթացը.

1. Մասնաճյուղն առաջնորդվում է <u>ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգով,</u> կրթության որակի բնագավառում իր քաղաքականությամբ և ունի որակի ներքին ապահովման իր կազմակերպական կառուցվածքը: 2009թ. դեկտեմբեր 28-ին ձևավորվել է Որակի կառավարման հանձնաժողովը, 2011թ.՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը:

2. 2010-2011թթ.-ին իրականացվել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների պիլոտային և 2012-13թ փորձնական ինքնավերլուծություններ: Այդ ընթացքում մշակվել են մի շարք քաղաքականություններ, կանոնակարգեր և կարգեր.

– *ԵՊՀ ԻՄ որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման քաղաքականությունը /28.12.2013թ. ԳԽ/* ,

– *ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգը /28.12.2013թ. ԳԽ/,*

– *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի քաղաքականությունը մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման բնագավառում /22.03.2014թ. ԳԽ/,*

– *ԵՊՀ ԻՄ քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում / 27.05.2014թ. ԳԽ/*

– *ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կանոնակարգ,* դասի գնահատման հարցաթերթ և դասալսման արդյունքների վերլուծության ձևաթերթ */22.05.2014թ, ԳԽ/*,

– ԵՊՀ ԻՄ *ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվության ձևաթերթ* ,

– *Ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթի համար՝ <u>հետազոտման գործիքի անձնագիրը</u>,*

– պրակտիկայի

2014-15 ուստարում նախատեսվում է ըստ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության մի քանի չափանիշների իրականացնել մասնակի ինքնավերլուծություններ:

3. Տես խնդիր 1 ա/ 4 կետը

4. Մասնաճյուղում ուսումնական ծրագրերի մշակումը, հաստատումը, ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային-ռեսուրսային ապահովվածության գնահատումը իրականացվում է ԵՊՀ-ի համապատասխան չափանիշներով և ընթացակարգերով: Ըստ այդ չափանիշների և ընթացակարգերի մասնակիորեն գործում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման և մոնիթորինգի կարգը /թիվը ??/:

5. Մասնաճյուղում ուսանողների գնահատումը և արդյունքների բողոքարկումն իրականացվում է համապատասխան կարգերով: Թափանցիկության և հրապարակայնության ապահովման համար ընթացիկ քննությունների ձևաթղթերը, տետրերը ստուգվում են լսարաններում, բանավոր քննություններին կարող են մասնակցել ՈՒՄՎ և ՈՒԽ ներկայացուցիչներ, ուսումնական խորհրդատուն, դեկանը, ծնողներ, արդյունքները փակցվում են ֆակուլտետներում, լսարաններում: ՄԿՈԱ բաժնի կողմից մշակվել և 2014թ.-ի մայիսից դասախոսների և ուսանողների քննարկմանն է ներկայացվել գործող գնահատման համակարգում գործնական, լաբորատոր, սեմինար դասընթացներից, և ինքնուրույն

աշխատանքներից ուսանողի ձեռքբերումների գնահատումով արդյունարար գնահատականի բաղադրամասերի ձևավորմամբ համակարգերի նախագծերը /եզրափակիչ գնահատումով, առանց եզրափակիչ գնահատման և ստուգարքով ավարտվող դասընթացների համար/: Մի քանի դասախոսները այդ նախագծերը փորձարկում են տարբեր դաստընթացների համար:

6. Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման համար գործում են մի շարք մեխանիզմներ.

- ուսանողական հարցումներ,
- դասալսումների տարբեր ձևեր / փոխադարձ, բաց դասեր, դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից/
- որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք կազմակերպվում են մասնաճյուղում ԵՊՀ-ի աջակցությամբ,
- դասախոսների անհատական զարգացման պլաններ յուրաքանչյուր ուստարվա համար
- ինքնագնահատումը՝ դասընթացի փաթեթների միջոցով /այս գործընթացը իրականացման փուլում է/,
- դասավանդման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տարբեր համակարգերի կիրառմամբ դասընթացների իրականացման համար խրախուսման տարբեր ձևեր /պարգևատրում, պատվոգիր /:

7. և 8. Որակի ներքին գնահատման և ինքնագնհատման գործընթացներն ամբողջությամբ լուսաբանվում են մասնաճյուղի կայքում.

- 2013 թ. իրականացված Ինքնավերլուծության զեկույցը տեղադրված է կայքում, այն 2013թ. հունիսի 4-ին զեկուցումների տեսքով ներկայացվել է մասնաճյուղի աշխատակիցներին և ուսանողներին: Ինքնավերլուծության SWOT-վերլուծությունները ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումներին՝ իրենց հետագա գործունեության կազմակերպման համար: Ինքնավերլուծության գործընթացին ընդգրկված են եղել ուսանողներ,

2013թ. հունիսի 24-ին փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խումբը այցելել է մասնաճյուղ:

Այցի ընթացքում փորձագիտական խումբը հանդիպումներ է ունեցել վարչակառավարչական, դասախոսական և ուսանողական համակազմերի, մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, դիտարկել մասնաճյուղի ռեսուրսները:

- 2014թ սեպտեմբերին պլանավորվել է և ստեղծվել որակի ներքին ապահովման գործընթացներին աջակցող ուսանողական և դասախոսական աշխատանքային խմբեր/կենտրոն/:
- Տպագրվել է և կայքում տեղադրվել մասնաճյուղի համալրված գնահատման առանցքային ցուցանիշներն ըստ մասնաճյուղի ռազմավարական ծրագրի իրականացման: Փաստաթուղթն ընդգրկում է մեծաքանակ տվյալներ և

համապատասխան վերլուծություններ, ներկայացնում է մասնաճյուղի վերջին 4-5 տարիների գործունեության, ձեռքբերումների և տարբեր խնդիրների ինքնագնահատում:

***Խնդիր I/գ Ապահովել կրեդիտային համակարգի կիրառությունը մասնաճյուղի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:***

1. Մասնաճյուղում 2008թ. ներդրված է ուսումնառության կրեդիտային համակարգը:
2. Որոշ դասընթացների շրջանակներում փորձարկվել են ինքնուրույն աշխատանքների դերի բարձրացման և գնահատման տարբեր մեխանիզմներ: Մշակման փուլում է գտնվում նաև ինքնուրույն աշխատանքների կազմակերպման ու գնահատման կանոնակարգը:
3. Մասնաճյուղում կամընտրական առարկաների ընտրությունը կատարվում է մշակված կարգին համապատասխան («Ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման» 27. 05.2014թ. ):
4. Անհատական ծրագրով ուսումնառություն ***<u>չի կազմակերպվում:</u>***
5. Մասնակի բեռնվածությամբ ուսումնառություն ***<u>չի կազմակերպվում</u>***: /Գործում է ուսման վարձավճարների փոխհատուցման կանոնակարգը/:
6. 2011թ. –ից ներդրված է ԵՊՀ կողմից մշակված «SuperVision» ծրագիրը, 2012թ-ից՝ ուսանողների հաճախումների, դասացուցակի կառուցման և քննաշրջանի ամփոփման մասնաճյուղում մշակված ավտոմատացված համակարգը:
7. Կրթական ծրագրերի կառուցվածքում դասընթացների բովանդակությունը և ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները համապատասխանում են ԵՊՀ և հանրապետության տարբեր բուհերի առաջավոր փորձին: 2014 թ-ից ***<u>մասնաճյուղն ունի</u>*** առաջավոր փորձի ուսումնասիրման /բենչմարքինգի/ իր քաղաքականությունը, նախատեսվում է մշակել տարբեր ստորաբաժանումների համար նրա իրականացման կարգեր: Ուսումնական ծրագրերի անգլալեզու և ռուսալեզու տարբերակների կազմումը ընթացքի մեջ են:
8. ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսումնական վարչակազմը ամբողջությամբ տիրապետում են կրեդիտային համակարգին, իսկ յուրաքանչյուր տարեսկզբին առաջին կուրսեցիներին կրեդիտային համակարգին ծանոթացնում են յուրաքանչյուր մասնագիտության խորհրդատուն /կուրատորը/:

***Խնդիր I/դ Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար:***

1. Պլանավորվում է ստեղծել դասավանդման և ուսումնառության /դասավանդման աջակցման/ մասնաճյուղային կենտրոն: (2014թ. հոկտեմբեր)
2. Մասնաճյուղում գործում է «Երիտասարդ դասախոսների խրախուսման» կարգ, Պլանավորման ընթացքում գտնվող կենտրոնը պետք է մշակի նաև առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, սահմանի ամենամյա մրցանակներ՝ դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսների խրախուսման համար: Իսկ մինչև այդ Որակի բաժնի կողմից պարբերաբար իրականացվում է վերապատրաստումներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցում է նաև ԵՊՀ «Կրեդիտային համակարգով դասախոսների

որակավորման բարձրացման հնգամյա ծրագրին»: Բացի այս նշենք, որ տնօրենի հրամանով դասախոսները պարբերաբար պարգևատրվում են (հունվար-հունիս ամիսների ընթացքում դրամով խրախուսվել են 78 դասախոս) + խնդիր ե/ 2

3. Նախատեսվում է դասընթացի փաթեթի 2-րդ և 3-րդ բաժիններում ներառել դասախոսների ինքնագնահատման մեխանիզմը:

4. Գնահատման նոր ձևերն ընդգրկված են կրեդիտային համակարգով ուս-ումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքերի մեջ /ավարտական, կուրսային աշխատանքների գնահատման չափանիշները/, քննարկման է ներկայացված դասընթացների գնահատման նոր նախագծերը, նախատեսվում է մշակել ամփոփիչ ատեստավորման քննության գնահատման չափանիշներ/ : ՈՒՄՎ

5. Մասնաճյուղում պարբերաբար բարելավում և արդիականացվում են ուսումնական ենթակառուցվածքները. վերջին տարիներին ստեղծվել են /On-line/ լսարան, համակարգչային 3 սրահները՝ համապատասխան տեխնիկական միջոցներով, 2013-2014 ուստարվա ընթացքում ստեղծվել է ֆրանսերեն և անգլերեն լեզուների համար մասնագիտական լսարաններ: Բարելավվել և հարստացվել են նաև գրադարանային պաշարները՝ ինչպես էլեկտրոնային, այնպես էլ գրքային: Ունենք անվճար ինտերնետ:

***Խնդիր I/ե Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը մասնաճյուղի ուսումնական գործընթացներում:***

Ուսումնական գործընթացների արդյունավետ իրականացման համար մասնաճյուղը ապահովել է տեղեկատվական բազմազան համակարգերի կիրառումը, ընդլայնել է նրանց ցանցը. Ձևավորված է տեխնոլոգիական կարողությամբ էլեկտրոնային /On-line/ ուսուցման 1 լսարան, տեսասարքով ապահովված 2 լսարաններ, 3-րդի ձևավորման աշխատանքները ընթացքի մեջ են, գործում են 3 համակարգչային սրահներ, 4-րդ սրահի ձևավորման աշխատանքները ընթացքի մեջ են, այդ սրահներում գործում է ներքին միասնական ցանց, վիրտուալ լաբորատորիաներ առայժմ չեն գործում:

1. Դասախոսների մեծամասնությունը առկա և հեռակա բաժիններում դասընթացները վարում են տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ: Դրան նպաստել են կրեդիտային համակարգով դասվանդողների վերապատրաստման շրջանակներում իրականացված «Լսարանային ցուցադրություն» վերապատրաստման դասընթացները, (մասնաճյուղում այդ դասընթացի վերապատրաստում են անցել .... դասախոսներ): ՄԿՈԱ բաժնի կողմից 2013թ –ից իրականացվում են թրեյնինգներ “Ինչպես պատրաստել արդյունավետ պրեզենտացիաներ” թեմայով: Հեռակա ուսուցման բաժինը 2014-15 ուստարվանից հիմնել է առանձին կայք-էջ, որտեղ ներբեռնվում են ուսումնառության անխափան կազմակերպման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերը: Դասախոսները կիրառում են ուսանողների հետ էլեկտրոնային փոստերով աշխատելու մեթոդը: Մասնաճյուղում գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է մասնաճյուղի համակարգիչների մեծ մասը /122 համակարգիչ/: Համակարգչային սրահները և գրադարանը ապահովված են ինտենետ կապով, ապահովված է էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը բոլոր ուսանողներին: Աշխատանքներ են տարվում միջազգային գրադարանային ցանցին մասնակցությունն ընդլայնելու նպատակով:

Նպատակ II. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***Մեծացնել մասնաճյուղի գիտական ներուժի ներդրումը տարածաշրջանի տնտեսական զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում, խրախուսել դասախոսական կազմի ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքներում:***

***Խնդիր*** **IIա/ Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:**

Քանի որ մասնաճյուղն իրականացնում է բակալավրիական կրթություն, հետազոտական նախագծեր, գիտահետազոտական ծրագրեր չեն իրականացվում, սակայն մասնաճյուղի դասախոսներն ակտիվ մասնակցում են հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, դրանցից մի մասը կազմակերպվել է մասնաճյուղում.

***Գիտաժողովներ***

| N | Թեմա | Ձևը | Տարեթիվը | Կազմակերպող | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | «Լեզուն, գրականությունը և արվեստը միջմշակույթային համատեքստում» | Երրորդ ***միջազգային*** գիտաժողով | 2012 | Օտար լեզուների ամբիոն | ԵՊՀ-ում |
| 2. | Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ֆրանսերենի ամբիոնի հիմնադրման 75-ամյակին նվիրված | Չորրորդ ***միջազգային*** գիտաժողով | 2012 | Օտար լեզուների ամբիոն | Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվ. Համ. |
| 3. | «Բուհերի կառավարման համակարգի բարելավման ժամանակակից հիմնախնդիրները» | ***Հանրապետական*** գիտա-գործնական կոնֆերանս | 2012 | Ընդ. Տնտ. Ամբիոնի կողմից | ԵՊՀ ԻՄ |
| 4. | Սայաթ-Նովայի 300-ամյակին նվիրված | ***Գիտական նստաշրջան*** | 2012 նոյեմբեր | ՀԼԳ ամբիոնի կողմից | ԵՊՀ ԻՄ |
| 5. | Հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված | ***Հանրապետական*** գիտական նստաշրջան | 2013թ. ապրիլ | ՀԼԳ ամբիոնի կողմից | ԵՊՀ ԻՄ |
| 6. | ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հիմնադրման 5 -ամյակին նվիրված | գիտաժողով | 2013 հոկտեմբեր | ԵՊՀ Ռ/Գ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի կողմից | ԵՊՀ /մասնակցել են 4 դաս/ |
| 7. | «Հայաստանի արտաքին առևտրատնտեսական կապերի զարգացման հիմնախնդիրները» | Ուսանողական գիտաժողով | ?? | Ընդ. Տնտ. Ամբիոնի կողմից | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. | Հայաստանի հյուսիս-արևելյան տարածաշրջանի կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրներ | Գիտական սեմինար | 2014 ? | Անտառագիտության ամբիոնի կողմից | ԵՊՀ ԻՄ |
| 9. | բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը և անտառային էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ազդեցության հիմնական ուղությունները | Գիտական սեմինար | ? | Անտառագիտության ամբիոնի կողմից | ԵՊՀ ԻՄ |
| 10. | | | | | |

Վերջին տարիներին ավելացել է մասնաճյուղի թեկնածուական թեզ պաշտպանած տեղացի աշխատակիցների թիվը, որին անշուշտ նպաստում է «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները:

| | *Գիտ.թեկնածու* | *դոկտոր* | *Ասպիրանտներ/ հայցորդներ* |
|---|---|---|---|
| ***2011-12*** | 2 | 1 | 7 |
| ***2012-13*** | 4 | - | 8 |
| ***2013-14*** | 4 | - | 18 |
| ***2014-15*** | 5 | - | |

Մասնաճյուղում 2014-15 ուստարում աշխատում են 49 Գ.թ-ներ և 4 գ.դ.-ներ:

Թեպետ քիչ քանակով, սակայն մասնաճյուղի դասախոսները /հիմնականում ԵՊՀ-ից հրավիրված/ մասնակցում են տարբեր հետազոտական նախագծերի:

Գիտական գործունեության ցուցանիշներ

| *Ցուցանիշ* | *2010-11* | *2011-12* | *2012-13* | *2013-14* | *2014-15* |
|---|---|---|---|---|---|
| Հետազոտական նախագծերումընդգրկված դասախոսների թիվը | 4 | - | 2 | 10 | |
| Գիտական հրատարակությունների թիվը | 133 | 94 | 97 | | |
| Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը | 22 | 25 | 23 | | |

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի տ.գ.դ. Հ. Մարզպանյանը և տ.գ.թ. Գ. Սիրոյանը ընգրկված են Շվեցարիայի Ֆրայբուրգի համալսարանի կողմից միցութային կարգով տրամադրված դրամաշնորհային ծրագրում “Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում” թեմայով, որը սկսվել է 2012թվի հոկտեմբերի 1-ից, նախատեսված է 2 տարվա համար, այն շուտով կավարտվի: Ծրագրի աշխատանքներում ընդգրկվել են նաև տնտեսագիտության ֆակուլտետի բարձր կուրսի ուսանողներ՝ իրենց կուրսային աշխատանքերի համապատասխան թեմատիկայով:

***Արտասահմանյան դրամաշնորհներ***

| **Թեմայի անվանումը /նշելով նաև թեմայի կոդը/** | **Ղեկավար** | **Ժամկետը** |
|---|---|---|
| 1.Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ –ում: | Մարզպանյան Հ. Ա. | 2012թ հոկտեմբեր-2014թ. նոյեմբեր |

Դասախոսների կողմից հրատարակվում են դասագրքեր, մենագրություններ, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, հոդվածներ և զեկուցումների թեզիսներ: Եվ ինչպես ցույց են տալիս տվյալները դասախոսները կայուն զբաղված են գիտական գործունեությամբ:

### *Հրատարակություններ*

| Ուտարի | Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|---|
| 2010-11 | 3 | 1 | 6 | 6 | 128 | 5 |
| 2011-12 | 1 | 4 | 3 | 8 | 93 | 6 |
| 2012-13 | 0 | 3 | 1 | 7 | 91 | 7 |
| 2013-14 | _ | 6 | 3 | 5 | 98 | 15 |
| 2014-15 | | | | | | |
| ***Ընդամենը*** | ***4*** | ***14*** | ***13*** | ***26*** | ***410*** | ***33*** |
| Հումանիտար ֆակուլտետ | | | | | 81 | |
| Տնտեսագիտության ֆակուլտետ | | | | | | |

Ուղղակի պետք է նշել, որ մասնաճյուղում գիտական գործունեություն իրականացվում է , սակայն դեռևս աջակցման բավարար մեխանիզմներ չեն գործում:

Մասնաճյուղն իրականացրել և շարունակում է իրականացնել մի շարք համագործակցային ծրագրեր, որոնք ընդգրկում են աջակցման տարբեր ձևեր՝ վերապատրաստման դասընթացներ, արժեքավոր բուհական դասագրքերի և մեթոդական ուղեցույցների տրամադրում, «ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության բարձր առաջադիմությամբ սոցիալապես անապահով ուսանողներին ֆինանսական օգնություն, բարձր կուրսերի ուսանողների պարբերաբար այցելություններ և գործնական պարապմունքներ և այլն:

Համագործակցություն

| *N* | *Կազմակերպությունը* | *Ժամկետը* | *Համագործակ-ցության ձևը* | *Աջակցման ձևը* | *Արդյունքը* |
|---|---|---|---|---|---|
| *1.* | ԳՌԵՖ/GREF/ թոշակառու մանկավարժներն առանց սահմանների/ ֆրանսիական հասարակական կազմակերպություն | *2010-11 ուստարի* | *Միջազգային* | կրթական համագործակցության պայմանագիր | |
| *2.* | «ֆրանս-հայկական բարեկամության» ասոցիացիա | *2011-12* | *Միջազգային* | | |
| *3.* | ԳՌԵՖ | *2011-12 /գարուն/* | *միջազգային* | Վերապատրաստման դասընթացներ | մանկավարժական վերապատրաստում համալսարանում |
| *4.* | Ֆրանսիայի Վալանս քաղաքի տեխնոլոգիական համալսարան | *2011-12* | *միջազգային* | փոխհամագործակցության պայմանագիր | |
| *5.* | Ֆրանսիայի Վալանս քաղաքի տեխնոլոգիական համալսարան | *2012-13* | *միջազգային* | ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի **փոխանակման ծրագրեր** | 1 դասախոս, 5 ուսանող անցել են մեկամյա վերապատրաստման դասընթացներ, ստացել են հավաստագրեր |
| *6.* | ԳՌԵՖ | *2012-13* | *միջազգային* | Աջակցություն օտար լեզուների ամբիոնին | Արժեքավոր բուհական դասագրքերով և մեթոդական ուղեցույցներ |
| *7.* | ԳՌԵՖ | *2013 ապրիլ մայիս* | *միջազգային* | Վերապատրաստման դասընթացներ | Ֆրանսերեն լեզվի դասախոսները ստացել են հավաստագրեր |
| *8.* | ԳՌԵՖ | *2012-13* | *միջազգային* | Ֆինանսական աջակցություն | «ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության բարձր առաջադիմությամբ սոցիալապես անապահով ուսանողներին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ***9.*** | «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ | ***2013-14 /2013թ. հոկտեմբեր/*** | ***միջազգային*** | Համագործակցություն Անտառագիտության ամբիոնի հետ | Բարձր կուրսերի ուսանողների պարբերաբար այցելություններ և գործնական պարապմունքներ, դասընթացներ |
| ***10.*** | Եվրամիության կողմից ֆինանսավորվող և WWF-ի կողմից իրականացվող | ***2013-14*** | ***միջազգային*** | Համագործակցություն Անտառագիտության ամբիոնի հետ | «Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ» ծրագիր, Նոյեմբերյանի անտառտնտեսության Կողբի անտառապետությունում գտնվող «Նոյեմբերյան» տարածքը (մոտ 78 հա) ավարտական աշխատանքի թեմա |
| ***11.*** | Ավանդական գոբելենագործության վարպետության դասեր | ***2013-14*** | ***միջազգային*** | Համագործակցություն Կիրառական արվեստի ֆակուլտետի հետ | Վարպետության դասեր Մոսկվայից հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու. Ս. Հովսեփյանի կողմից |

*Նպատակ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

***Աջակցել տարածաշրջանի հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով մասնաճյուղի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:***

***Խնդիր III ա/ Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույնս ներգրավումը:***

**1. Հասարակայնության հետ կապերի հետագա զարգացման և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույն ներգրավման համար իրականացվել են մի շարք գործընթացներ:** Մասնաճյուղի դրական հեղինակության պահպանման և ամրապնդման, նրա հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով մասնաճյուղն իրականացնում է Տեղեկատվության տարածման և մասնաճյուղի գովազդայի-լրատվական, քարոզչական բազմազան մեխանիզմներ: Մասնաճյուղն ունի հասարակայնության հետ աշխատելու իր PR քաղաքականությունը /27.05.2014/:

Մասնաճյուղի տնօրենի, կառուցվածքային ստորաբաժանումների, հասարակական միավորումների (արհբյուրո, ուսանողական գիտական ընկերություն, ուսանողական խորհուրդ և այլն), այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկման աշխատանքները 2012թ.-ից համակարգում և իրականացնում է հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատուն:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության լուսաբանման, թափանցիկության և տեղեկատվության մատչելիության ապահովման համար 2011թ. հոկտեմբերի 1-ից գործում է մասնաճյուղի ինտերնետային կայքը /http://www.ijevan.ysu.am/, “Facebook” սոցիալական ցանցում գործում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջը: Մասնաճյուղի մասին տեղեկատվություն և նկարագրություններ են տպագրվում «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», «YEREVAN STAT UNIVERSITY”, «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ», “IJEVAN” տեղեկագրքերի մեջ, «Սփյուռ» տեղեկատվական կենտրոնի հրատարակած «Հայաստանի դեղին էջեր» ժողովածուում և նրանց ինտերնետ-կայքում: Մասնաճյուղը համագործակցում է 1-ին լրատավականի թղթակիցների հետ և լուսաբանում կատարված կարևոր իրադարձությունները («ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների խնդիրները արտաքին շահակիցների ուշադրության կենտրոնում» /2014թ. փետրվարի 10/, «Մասնաճյուղում բացվեց «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը» /2014թ. փետրվարի 24/ «Մասնաճյուղում կայացավ հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով» /2014թ. ապրիլի 25/ և այլն): Տեղական լրատվական ալիքով նույնպես ներկայացվում են մասնաճյուղում տեղի ունեցած միջոցառումները:

Պաշտոնական կայքի (ijevan.ysu.am) միջոցով առանձնահատուկ լուսաբանվում են մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների գործընթացները, իրադարձությունները, կազմակերպված միջոցառումները, հարցազրույցները, տեղադրվում են հայտարարություններ, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորություններ, կա հարցեր ուղղելու և պատասխանները ներկայացնելու հնարավորություն: 2012թ. սեպտեմբերից, մինչև այժմ տեղադրվել է 28 հարցուպատասխան: Կայքը պարբերաբար կատարելագործվում է: Մասնաճյուղի էլ.կայքն այս օրվա դրությամբ ունի 156 էջ, տեղադրված է 710 նյութ՝ հայտարարություններ, նորություններ և այլն, 2700 ֆայլ, որոնցից 1923-ը նկարներ են: Նշենք, որ կայքի վարկանիշը բավականին բարձր է, ինչը բնութագրվում է նրա այցելությունների քանակով./նկարը/ ԵՊՀ ԻՄ-ի տեղեկատվական

քաղաքականության իրականացման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության, ԵՊՀ-ի պաշտոնական կայքերից ձեռք են բերվում անհրաժեշտ տեղեկություններ և մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով լուսաբանվում:

2. Կայքում առանձին բաժնով տեղադրվում են ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ակունք» գիտական հոդվածների բոլոր ժողովածուները, ինչը ապահովում է մասնաճյուղի դասախոսների գիտական աշխատանքների հրապարակայնությունը և նպաստում տարածաշրջանում ու ՀՀ-ում գիտական մտքի զարգացմանը, նաև իրականացնում մասնաճյուղի գովազդը: Նույն նպատակն է հետապնդում կայքի առանձին բաժինը շրջանավարտների համար՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններով, որտեղ պարբերաբար տեղադրվում են համապատասխան նյութեր:

Ընթացքի մեջ է Կիրառական արվեստի ֆակուլտետի գործունեության վերաբերյալ բուկլետի պատրաստման, մասնաճյուղի վերաբերյալ տեսաֆիլմ նկարելու գործընթացները: 2011թ-ից հաջողությամբ իրականացվում են այցելություններ մարզի դպրոցներ: Մեր ուսանողները ակտիվ մասնակցում են հանրապետական և տեղական տարբեր միջոցառումների /սպորտային/ և ակցիաների /մոմերով երթ/:

***Խնդիր IIIբ/ Զարգացնել հարատև ուսումնառության համակարգը մասնաճյուղում՝ սոցիալական պատվերին համահունչ:***

Մասնաճյուղում հարատև կրթության հատուկ քաղաքականություն չի վարում: Նախատեսվում է համագործակցել մարզի զբաղվածության կենտրոնի հետ՝ գործազուրկների համար դասընթացներ կազմակերպելու համար: Միևնույն ժամանակ կայքում պարբերար տեղադրվում են հարատև կրթության տարատեսակ հայտարարություններ:

## *IV. ՈՐԱԿՅԱԼ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ*

***Ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:***

**Խնդիր IV ա/ Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման համալսարանական չափանիշներին համապատասխան:**

ա/ Դասախոսական կազմի բազմաչափ գնահատում

1. 2009թ-ից իրականացվում է մասնաճյուղի առանցքային ցուցանիշների գնահատում, որի կարևոր բաժիններից մեկը ուսումնական գործընթացի՝ մասնավորապես դասախոսների բազմաչափ գնահատումն է.

- Դասախոսական կազմի համալրումը,
- տարիքային գնահատում,
- սեռային գնահատում,

| Ցուցանիշ | 2011-12 | 2012-13 | 2013-14 | 2014-15 |
|---|---|---|---|---|
| Ընդհանուր դասախոսական կազմը | 121 | 117 | 129 | 111 |
| Դասախոսական կազմի համալրումը | -12 | -2 | 10 | -18 |
| Մինչև 35 տարեկան | 16 | 21 | 25 | 27 |
| 35-65 տարեկան | 73 | 68 | 80 | 75 |
| 65-ից բարձր | 10 | 8 | 10 | 9 |
| Միջին տարիքը | 49,1 | 48 | 48 | 49 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իգական սեռի հաշվեկշիռը | 51,5% | 53,6% | 57% | 54% |
| Որակավորման բարձրացում անցած | 56 | 69 | 95 | |

Կիրառվում են դասախոսների մասնագիտական պատրաստության և մանկավարժական վարպետության գնահատման տարբեր մեխանիզմներ, որոնց մասին վերևում արդեն նշվել է.

- ուսանողական համապատասխան հարցումներ,
- դասալսումների տարբեր ձևեր,
-«դասընթացի փաթեթ»-ի միջոցով ինքնագնահատման գործընթացը սկսված՝ 2014թ սեպտեմբերից և ընթացքի մեջ է:

2. մասնաճյուղի կադրային ապահովվածությունն ըստ գիտակարգերի՝ 4 գ.դ, 49 գ.թ., ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը հասել է 50%-ի, և վերջի 4 տարիներին թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել 15 դասախոսներ, և դոկտորական ատենախոսություն՝ 1:

3. 2009թ. դեկտեմբերի 28-ին հաստատվել է «ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կանոնակարգը», ձևավորվել է մրցութային հանձնաժողովը,

–2011թ.-ից ապահովվում է ԵՊՀ-ի կողմից իրականցվող «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» վերապատրաստման ծրագիրը նաև մասնաճյուղի հիմնական դասախոսների համար: Սահմանված կրեդիտները հավաքելու համար՝ մասնաճյուղում մայր բուհի աջակցությամբ ու սեփական նախաձեռնությամբ պարբերաբար իրականացվում են վերապատրաստման դասընթացները:

3. Մասնաճյուղում մշտական գործում են դասախոսների իրնքնակրթության խրախուսման տարբեր մեխանիզմներ՝

- գործուղումներ տարբեր վերապատրաստման դասընթացների /2013 թ.-ին “Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում” թեմայով եռափուլ դասընթացներ ՈԱԱԿ-ում, ամառային դպրոց՝ «քանակական հետազոտության մեթոդաբանություն» թեմայով, կազմակերպված հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից/
- պարգևատրումներ գիտության մեջ քայլ կատարած դասախոսներին,
- աջակցություն դասախոսներին ուսումնական և մեթոդական ձեռնարկների անվճար հրատարակության գործում,
-աջակցում դասախոսների հրատարակած գրքերի շնորհանդեսների կազմակերպմանը,
- «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում դասախոսների հոդվածների անվճար տպագրում,
-մանկավարժական շարժունության ?

- 5. Պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստումներ՝ տիրապետելու կրթական նոր տեխնոլոգիաներին և դրանք ներդնելու ուսումնական գործընթացում՝ հրավիրված և տեղացի մասնագետների ուժերով:

Դասավանդողների մեծամասնությունը դասերը իրականացնում են նորագույն տեխնոլոգիաների կիրառությամբ՝ շնորհանդեսներ, on-line թեստերավորում և այլն: Տնտեսագիտության և Բնական գիտությունների ֆակուլտետներում որոշ դասընթացներն անց են կացվում ռուսաց լեզվով:

6. Մասնաճյուղում կայքէջում պարբերաբար տեղադրվում են ԿԳ Նախարարության կողմից կրթության բնագավառում իրականացվող բոլոր նորագույն ծրագրերի մասին հայտարարությունները:

***Խնդիր IV բ/ Բարձրացնել մասնաճյուղի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը՝ ուղղորդելով գործընթացը դեպի կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:***

1. Մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներում և կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծվել են արիբյուրոներ, որոնք ընդգրկված են կառավարման բոլոր օղակներում: Այդ անդամների միջոցով իրականացվում է աշխատակիցների սոցիալական վիճակի մշտադիտարկում: Աշխատակիցների սոցիալական վիճակի համալիր գնահատման համար նախատեսվում է իրականացնել համապատասխան հարցումներ (մշակվում է հարցաշար): Արիբյուրոյի կողմից օգնություններ են տրվում մեծ թվով աշխատակիցների:

2. Մասնաճյուղի դասախոսները պարբերաբար խրախուսվում են, նախատեսվում է մշակել հստակ չափորոշիչներ:

3. Մասնաճյուղում վերջին երեք տարիների ընթացքում (2014թ. սեպտեմբեր) դասախոսների միջին աշխատավարձը բարձրացվել է երեք անգամ (15000 դրամով): Այժմ դասախոսի միջին աշխատավարձը 107 հզ. դրամ է:

4. Բյուջեում ոչ մի տվյալ այս մասին չկա: արիբյուրո + հաշվապահություն

5. Մասնաճյուղի բակում 2012թ. գործում է հասարակական սննդի կետ, որից օգտվում են և ուսանողները, և աշխատակիցներ: Պարբերաբար տնօրենության կողմից անց է կացվում բանավոր հարցումներ ուսանողության և աշխատակիցների շրջանում, ու մինչ այժմ սննդի որակից և մատչելիության վերաբերյալ դժգոհություններ, բողոքներ չկան: Իսկ Երևանից ժամանած դասախոսներն առավոտյան ստանում են անվճար սնունդ՝ նախաճաշ, ունեն հանգստի սենյակ, ինչպես հյուրանոցի ներսում, այնպես էլ բակում:

## *V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ*

***Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:***

**Խնդիր Vա/ Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի ուսումնական և գիտական լաբորատոր բազան՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան:**

Մասնաճյուղը ստեղծել է ժամանակակից հագեցած աշխատանքայի և ուսումնական միջավար:

1. Մասնաճյուղում պարբերաբար գնահատվում են լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատոր բազայի վիճակը, հաշվի են առնվում ֆակուլտետների դեկանների և ամբիոն վարիչների պահանջարկները՝ ըստ այդմ ստեղծվում են, տեխնիկապես հագեցվում են լսարանները, լաբորատորիաները, համակարգչային սրահներ: Այդ ուղղությամբ 2011-14 թթ իրականացվել են բավականին աշխատանքներ./Այվազյան աղյուսակը/

2,3,5. Կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան մասնաճյուղում ստեղծվում են նոր ուսումնագիտական

լաբորատորիաներ. այսպես այս ընթացքում ստեղծվել են Անգլերենի և Ֆրանսերենի մասնագիտական լսարաններ, 2014թ. սեպտեմբերին վերազինվել են Կիրառական արվեստի ֆակուլտետի արվեստանոցները, ստեղծվել է «Դիզայնի» լաբորատորիան, ֆակուլտետում ունենք նաև նոր ստեղծված տեսասարքով լսարան, այս ընթացքում ստեղծվել է նաև օնլայն լսարանը, համակարգչային 2 սրահ:

4.Ակտիվացվում և ընդլայնվում է մասնաճյուղի համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ՝ VivaCell MTS, Orange, ՀՕՖ և այլն:

4. Մասնաճյուղի համակարգչային 3 սրահներն ապահովված են համացանցով, տեսասարքերով, նախատեսվում է Տնտեսագիտության ֆակուլտետում ևս ստեղծել նոր համակարգչային սրահ:

5. Ֆակուլտետների դեկանների համագործակցության արդյունքում ուսումնական և լաբորատոր տարածքներն օգտագործվում են առավել արդյունավետ:

***Խնդիր V բ/ Ստեղծել մասնաճյուղի միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել նրա մատչելիությունը ուսանողների և աշխատողների համար:***

1. Մասնաճյուղում բավականի ակտիվ կերպով գործում է ուսանող դասախոս էլեկտրոնային շփումը:

## *VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

***Տրամադրել բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայութ-յուններ, որոնք միտված են ուսանողների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը՝ առավելագույնի հասցնելով ուսումնառությունը հաջողությամբ ավարտելու նրանց հնարավորությունները:***

***Խնդիր VIա/ Բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնառությունից և օժանդակ ծառայություններից:***

Մասնաճյուղում 2010թ. սկսած պարբերաբար գնահատվում է ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղում ստացած կրթությունից՝ առկա և հեռակա ուսուցման համար:

1. Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքման գործընթացի կանոնակարգման և իրականացման համար.

– Մասնաճյուղի կայքէջում (http://ijevan.ysu.am/) առանձնացվել է Շրջանավարտ բաժինը՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններով, որտեղ պարբերաբար տեղադրվում են համապատասխան նյութեր,

– Facebook սոցիալական ցանցում ստեղծվել է ԵՊՀ Իջևանի շրջանավարտ էջը (https://www.facebook.com/shrjanavart?ref_type=bookmark) մասնաճյուղի գործունեության, տարածաշրջանում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ շրջանավարտներին պարբերաբար տեղեկություններ տրամադրելու նպատակով,

Ստեղծվել է մասնաճյուղի վերջին 5 տարիների շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ համակարգչային բազա,

–

– գործում է գովազդային անկյունը, տեղադրված է առանձին ցուցատախտակ՝ մարզի տարբեր կազմակերպությունների կողմից պարբերական մամուլում աշխատանքային տարբեր պաշտոնների համար տպագրված հայտարարություններով և այլ փաստաթղթերով,

2. տվյալների հավաքագրման գործընթացին զուգահեռ շրջանավարտների և հիմնական գործատուների հետ իրականացվում են հանդիպումներ, կայքում տեղադրվում են հայտարարություններ տարբեր կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցություն իրականացնելու համար՝ մեր լավագույն ուսանողներից և շրջանավարտներից կազմակերպությանն անհրաժեշտ մասնագետներ ընտրելու նպատակով: Այդ խնդրի իրականացման համար նախատեսվում է 2014-15 ուստարում այդ ուսանողների համար իրականացնել նպատակային արտադրական և մանկավարժական պրակտիկաներ:

Կենտրոնի աջակցությամբ ուսանողները և շրջանավարտները մասնակցել են տարբեր մրցույթների և հարցազրույցների, որոնց արդյունքում շուրջ 5 շրջանավարտ ընդունվել է աշխատանքի:

3. Տնօրենության կողմից հաճախակի խրախուսվում են Ուսանողական խորհրդի և գիտական ընկերության կողմից իրականացված միջոցառումները, կատարվում է համապատասխան ֆինանսավորում:

4. Մասնաճյուղում վերջին տարիների կրթաթոշակի նշանակման գործընթացում վճռորոշ դեր ունեն ուսանողական կառույցները:

5. Մասնաճյուղում 2009թ. գործում է օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանման հանձնաժողովը:

**Խնդիր VIբ/ Զարգացնել մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսները ժամանակակից չափանիշներին համապատասխան, ապահովել դրանց արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:**

1. Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական տեսուրսների մատչելիությունը, որին աջակցում է անվճար ինտերնետը, էլեկտրոնային ընթերցասրահի հիմնումը, էլեկտրոնային պաշարների հարստացումը:
2. Մասնաճյուղի ուսանողները ազատորեն օգտվում են Ինչպես ԵՊՀ, այն պես էլ հանրապետության ֆունդամենտալ գրադարանների էլեկտրոնային պաշարներից:
3. 2014թ. հունվարի 27-ին ստեղծվել է ԵՊՀ ԻՄ գրադարանային խորհուրդը:

## VII. ԲԱԶՄԱԶԱՆԵՑՎԱԾ ՄՈՒՏՔ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱԽՍԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ընդլայնել մասնաճյուղի ընդունելության պրոֆիլը և այն համապատասխանեցնել տարածաշրջանի տնտեսական զարգացման կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին:**

**Խնդիր VII ա/ Ակտիվացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ ժողովրդագրական բացասական միտումների պայմաններում դիմորդների հոսքի պահպանմամ համար:**

***Խնդիր VIIբ/ Ընդունելության կառուցվածքը և չափաքանակները համապատասխանեցնել մասնաճյուղի աշխատաշուկայի և դիմորդների համադրված կարիքներին:***

1. Ընդլայնվում և ակտիվացվում է մասնաճյուղի գովազդարշավը, որին օգնում է կայքէջը, որում տեղադրվում է տարաբնույթ տեղեկատվություն: կազմակերպվում են հանդիպումներ գործատուների հետ, հաճախակի են այցեր կատարվում մարզի հանրակրթական դպրոցներ:

2. Հայտարարությունները տեղադրվում են մասնաճյուղի կայքում և ներկայացվում են տեղական և հանրային հեռուստատեսությամբ:

3. Օգտվում ենք ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույցը»-ից:

4. 2011թ.-ից կազմակերպվում են այցելություններ մարզի ավագ և միջնակարգ դպրոցներ, մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները դասախոսություններ են կարդում աշակերտների համար: Յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր և մարտ ամիսներին կազմակերպում է բաց դռերի օր:

5. 2012-13 ուստարում, մասնաճյուղը պայմանագրեր է կնքել տարածաշրջանի 4 ավագ դպրոցների հետ և բոլոր քոլեջների հետ, նաև Արարատի քոլեջի հետ: Նշված պայմանագրի շրջանակներում նշված դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են դասախոսություններ և խորհրդատվություն:

6. 2011թ-ց յուրաքանչյուր ուստարում, ԵՊՀ-ի հետ համատեղ, դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար մասնաճյուղում կազմակերպվում են հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաներ:

7. 2014-15 ուստարվա համար Կիրառական արվեստի ֆակուլտետի դիմորդների համար նախատեսված է իրականացնել նախապատրաստական դասընթացներ՝ գծանկար, գունանկար և կոմպոզիցիա առարկաներից, գործընթացը սկսված է:

## *VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ*

***Նախաձեռնել մասնաճյուղի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնում և դրանց բազմազանեցում: Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը:***

**Խնդիր VIII ա/ Մեծացնել մասնաճյուղի ֆինանսական միջոցների ներհոսքը և բազմազանեցնել դրանց աղբյուրները:**

Մասնաճյուղը կրթական, գիտահետազոտական և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում շուկայավարման և առևտրացման քաղաքականություն չունի: Մասնաճյուղը չունի արտաբյուջետային միջոցներ:
ստորաբաժանումներ :

1. Նախատեսվում է 2014-15 ուստարվա համար կազմակերպել նախապատրաստական դասընթացներ կիրառական արվեստի ֆակուլտետի դիմորդների համար գծանկար, գունանկար և կոմպոզիցիա առարկաներից:

2. Նախատեսվել է ստեղծել մասնաճյուղի շրջանավարտների միություն և նրա գործունեությունը նպատակաուղղել մասնաճյուղի արտաքին գործակցային կապերի ձևավորմանը, այս գործընթացն առայժմ ընթացքի մեջ է:

***Խնդիր VIIIբ/ Մեծացնել շրջանավարտների, նվիրատու կազմակերպությունների և անհատների ներդրումների ծավալը մասնաճյուղի զարգացման ծրագրերում:***

1. Մասնաճյուղում ստեղծվել է շրջանավարտների տվյալների գրանցման, տեղեկատվական և հաղորդակցության համակարգ:

***Խնդիր VIIIգ/ Բարձրացնել ֆինանսական ռեսուրսների կառավարման և օգտագործման արդյունավետությունը***

Մասնաճյուղի ֆինանսական վիճակը բավականին լավ է, մասնաճյուղում երբևէ աշխատավարձի ուշացում չի եղել, մասնաճյուղը ոչ մի կազմակերպության և հարկային պարտք չունի: Մասնաճյուղի ֆինանսական վիճակը կայուն է: